Funded by the European Union

ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի



Իրականացման ժամանակահատված: 01.01.2019 - 31.08.2026

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 19 500 000

Ընդհանուր բյուջե: € 19 500 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNECE, UNEP, UNIDO, OECD, World Bank

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

facebook.com/EU4EnvironmentMoldova, facebook.com/EU4Environment-100539842031096

Նախագծի կայքէջ: eu4environment.org

Նախագծի նկարագրություն:

Եվրոպական միության «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի նպատակն է օգնել վեց գործընկեր երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և ամրապնդել մարդու շրջակա միջավայրի բարեկեցությունը՝ բնապահպանական միջոցառումներիաջակցության,«կանաչ աճի»հնարավորությունների ստեղծման և ցուցադրման, բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարման մեխանիզմների սահմանման միջոցով:

Ծրագիրը հիմնված է նախկինում համատեղ իրականացված ծրագրերի կարևոր ձեռքբերումների վրա, այդ թվում՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան հարևանության տարածաշրջանում» (EaP GREEN) ծրագիրը, Անտառային օրենսդրության կիրարկում և կառավարում (FLEG) ծրագիրը և Էմերալդ ցանցը, որոնք իրականացվել են 2017-18թթ.-ին: «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հիմքում ընկած է ընդլայնված համագործակցությունը, որը ձևավորվել է 2017թ.-ի նոյեմբերի Արևելյան գործընկերության գագաթնաժողովին ընդունված «2020թ.-ի 20 առանցքային արդյունքների» շուրջ:

Ծրագիրը կիրականացվի հինգ միջազգային կազմակերպությունների կողմից՝ ՏՀԶԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ:

Ակնկալվող արդյունքներ:

Համախմբելով բնապահպանության և էկոնոմիկայի ոլորտների դերակատարներին՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն աջակցում է քաղաքականության և օրենսդրական բարեփոխումներին՝ «կանաչ»պլանավորման և ներդրումների, նորարարական տեխնոլոգիաների ներգրավման, նոր բիզնես մոդելների ընդունման, «կանաչ» աշխատատեղերի ստեղծման միջոցով: Ծրագիրը նաև խթանում է պատշաճ բնապահպանական կառավարումը, պահպանվող տարածքների և անտառների արդյունավետ կառավարումը, կայուն առևտուրը: